

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017

---

Ստեփանակերտի քաղաքապետարանի  
գործունեության

2017 թվականին Ստեփանակերտի քաղաքապետարանն իր գործունեությունն իրականացրել է Արցախի Հանրապետության Սահմանադրության, <<ԱՀ շրջաններում պետական կառավարման մասին>> ԱՀ Նախագահի հրամանագրի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ԱՀ օրենքի հիման վրա:

Քաղաքապետարանի 2017թ. գործունեության համար գլխավորապես ծրագրային հիմք են հանդիսացել՝

- ԱՀ Նախագահի նախընտրական ծրագիրը,
- ԱՀ կառավարության գործունեության ծրագիրը,
- ԱՀ կառավարության 2017թ. գործունեության միջոցառումների

ծրագիրը:

Հաշվետու ժամանակաշրջանում քաղաքապետարանի կողմից իրականացվող գործունեությունն ուղղված է եղել բնակչության բարեկեցության բարելավմանը միտված համայնքային նշանակության հարցերի լուծմանը և համայնքի սեփականության տնօրինմանը:

Քաղաքապետարանի կողմից իրականացված միջոցառումները միտված էին օրենքով նախատեսված պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացմանը՝ հետևյալ բնագավառներում.

-ֆինանսներ,

-քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն,

-հողօգտագործում,

-տրանսպորտ,

-աշխատանք և սոցիալական ծառայություն,

-առևտուր և ծառայություններ,

-հասարակական կարգի պահպանություն,

-պաշտպանություն,

-քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն,

-կրթություն, մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ,

-Ֆիզիկական կուլտուրա և սպորտ,

-արտաքին կապեր:

### Ֆինանսներ

Ստեփանակերտի քաղաքային համայնքի 2017 թվականի տարեկան բյուջեի ընդհանուր մուտքերը կազմել են 1714975.6 հազ.դրամ՝ պլանավորված 1790448.0 հազ.դրամ գումարի 95.8%-ը: Ընդհանուր մուտքերի 24.1%-ը կազմել են սեփական եկամուտները, որոնց գծով պլանավորված 426007.0 հազ.դրամի դիմաց հավաքագրվել է 413775.6 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 97.1%: Նախորդ տարվա համեմատ սեփական եկամուտներն աճել են 17277.4 հազ.դրամով:

Շենքերից և շինություններից գանձվող գույքահարկի գծով մուտքերը կազմել են 101555.5 հազ.դրամ՝ նախատեսված 117.0 մլն դրամի 86.8%-ը: Շենքեր և շինությունների մասով՝ 15577.7 հազ.դրամի չափով չվճարված գույքահարկի վերաբերյալ նյութերը գտնվում են դատական գործընթացում: Հողի հարկից գանձվող մուտքերը կազմել են 10863.6 հազ.դրամ՝ պլանավորված 11000.0 հազ.դրամի 68.8%-ը: Հողի հարկի մասով 1702.7 հազ.դրամի չափով չվճարված հարկի վերաբերյալ նյութերը նույնպես գտնվում են դատական գործընթացում:

Փոխադրամիջոցներից մուտքագրվել է 162197.6 հազ.դրամի գույքահարկ, որը կազմում է պլանավորված 167407.0 հազ.դրամի 96.9%-ը, փոխադրամիջոցների մասով՝ 13113.9 հազ.դրամի չափով չվճարված գույքահարկի վերաբերյալ նյութերը գտնվում են դատական գործընթացում:

Տեղական տուրքերի գծով մուտքագրվել է 64405.4 հազ.դրամ, որը կազմում է նախատեսված 57.0 մլն դրամի 113.0%-ը: Պետական տուրքերի գծով մուտքագրվել է 17180.4 հազ.դրամ՝ պլանավորված 15800.0 հազ.դրամի դիմաց: Կատարողականը կազմել է 108.7%: Այլ հարկային եկամուտների գծով մուտքագրվել է 11522.8 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 107.7%:

Համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների 75.9%-ը կազմել են պետական բյուջեից տրամադրվող պաշտոնական դրամաշնորհները: 2017 թվականի տարեկան բյուջեի պլանավորված դոտացիայի գումարը կազմել է 1364441.0

հազ.դրամ, որից հատկացվել է 1301200.0 հազ.դրամ: Կատարողականը կազմում է 95.4%:

Այլ եկամուտների գծով 2017 թվականին մուտքագրվել է 46050.4 հազ.դրամ՝ պլանավորված 47100.0 հազ.դրամի դիմաց: Կատարողականը կազմել է 97.8%: Հողերի վարձակալության մասով համայնքային բյուջեի եկամուտները կազմել են 6071.1 հազ.դրամ՝ պլանավորված 7500.0 հազ.դրամի դիմաց: Հողերի վարձակալության մասով՝ 941.0 հազ.դրամի չափով չվճարված վարձավճարների վերաբերյալ նյութերը գտնվում են դատական գործընթացում: Գույքի վարձակալությունից եկամուտների կատարողականը կազմել է 96.7% կամ հավաքագրվել է 4835.0 հազ.դրամ՝ նախատեսված 5.0 մլն դրամի փոխարեն: Հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարների մուտքերը կազմել են 4071.2 հազ.դրամ՝ 6.0 մլն դրամի փոխարեն: Հողամասերի կառուցապատման մասով՝ 890.6 հազ.դրամի չափով չվճարված վարձավճարների վերաբերյալ նյութերը գտնվում են դատական գործընթացում: Վարչական գանձումներից մուտքերը կազմել են 26662.6 հազ.դրամ՝ 23.0 մլն դրամի դիմաց: Կատարողականը կազմել է 115.9%: Տուգանքներից և տույժերից մուտքերը՝ 2811.3 հազ.դրամ, պլանավորված 2500.0 հազ.դրամի դիմաց: Կատարողականը կազմել է 112.5%:

Քաղաքային համայնքի 2017 թվականի տարեկան բյուջեի ծախսերը ֆինանսավորվել են 1691481.9 հազ.դրամի չափով, որը կազմել է պլանավորված 1797017.7 հազ.դրամի 94.1%-ը: Համայնքի ենթակայության կազմակերպությունները ֆինանսավորվել են 1143410.9 հազ.դրամի չափով: Կատարողականը կազմել է 96.2%:

#### Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

2017 թվականին ընդունվել է քաղաքաշինության բնագավառին վերաբերող 311 որոշում: Շինարարության նպատակով ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվել է թվով 460 թույլտվություն: Նշված ժամանակաշրջանում քաղաքացիներին միաժամանակ տրամադրվել է 140 ավարտական ակտ և քանդման վերաբերյալ՝ 40 թույլտվություն: Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի և

շինարարության ավարտման աստիճանի վերաբերյալ տրամադրվել են անհրաժեշտ տեղեկանքներ: Հրավիրվել է Ստեփանակերտի վարչական սահմաններում գտնվող ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների, ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակը որոշող հանձնաժողովի թվով 7 նիստ, որտեղ քննության է առվել 36 հարց: Ստեփանակերտի քաղաքապետարանին կից գործող ճարտարապետական և քաղաքաշինական խորհրդի նիստերում քննարկվել է հասարակական հնչեղության 15 հարց:

Հաշվետու ժամանակահատվածում՝ իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների ապահովման նպատակով, ԱՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության հետ համատեղ քաղաքի բազմաբնակարան, բազմաֆունկցիոնալ, ինչպես նաև հասարակական նշանակության շինարարություն իրականացնող սուբյեկտներում պարբերաբար իրականացվել են ստուգումներ: Հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ կապալառուներին տրվել են պարտադիր կատարման հրահանգներ և ցուցումներ: Վերահսկողության արդյունքում՝ թվով 10 խախտումների մասով կազմվել են համապատասխան արձանագրություններ և ներկայացվել քաղաքապետարանին կից վարչական հանձնաժողովի քննարկմանը: Արձանագրություններ են կազմվել նաև կառուցվող 20 ճանապարհամերձ օբյեկտներում թույլ տրված խախտումների վերաբերյալ: Բացթողումները շտկելու համար շինարարության պատասխանատուները գրավոր ծանուցումներ են ստացել:

Շահագործման ենթակա տարբեր նշանակության օբյեկտների շինարարության ավարտման վերաբերյալ, հաշվետու ժամանակաշրջանում ձևակերպվել է 140 ակտ: Միաժամանակ կազմվել են պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված՝ թվով 15 օբյեկտի շինարարության շահագործման փաստագրման ակտեր: Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետները խախտած 280 սուբյեկտներ գրավոր ծանուցվել են տրամադրված շինարարության թույլտվությունների ժամկետների երկարաձգման և ավարտական

ակտերի ձևակերպման մասին: Թվով 310 սուբյեկտ ստացել է գրավոր զգուշացում: Բացահայտվել է կառուցվող օբյեկտի ու նախագծային փաստաթղթերի անհամապատասխանության 3 դեպք և շինարարությունը դադարեցնելու վերաբերյալ կազմվել համապատասխան կարգադրագրեր: Ընդհանուր օգտագործման տարածքներում և շինարարական հրապարակների շրջակայքում բարեկարգման, անվտանգության կանոնների պահպանման նպատակով, քաղաքացիներին և տնտեսվարող սուբյեկտներին ուղարկվել է թվով 160 ծանուցագիր:

Քաղաքային համայնքի բյուջեի և պետական բյուջեի միջոցների հաշվին 2017 թվականին Ստեփանակերտում զգալի աշխատանքներ են կատարվել վերանորոգման, վերակառուցման և բարեկարգման ուղղությամբ: Մասնավորապես՝ իրականացվել են բազմաբնակարան շենքերի ճակատային մասերի հարդարման և երեսապատման, հենապատերի և աստիճանների, մայրերի վերանորոգման ու վերակառուցման աշխատանքներ: Հիմնանորոգման են ենթարկվել Ստեփանակերտի շախմատի տան, Վ.Սարգսյան փողոցի հ.19 և 21 շենքերի ճակատային մասերը, Ազատամարտիկների փողոցի հ. 29 և Հ.Հակոբյան փողոցի հ.28 բնակելի շենքերի պատշգամբները: Աբովյան փողոցի հ. 2ա շենքի բակում և Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոնի տարածքում կառուցվել են մանկական խաղահրապարակներ: Պատշաճ որակով է իրականացվել Ս.Կասպարովի փողոցի հհ. 3,5, Մարտունի փողոցի հ.29 տների և Ազատամարտիկների փողոցի հ.21 շենքի բակերի կոյուղագծերի կառուցումը, ինչը նպաստել է շրջապատի սանիտարական վիճակի բարելավմանը: Բազմաբնակարան շենքերի վնասված տանիքների վերանորոգման նպատակով պետբյուջեից 20.0 մլն դրամի չափով շինանյութեր են հատկացվել համայնքի բնակիչներին, իրականացվել են 11.0 մլն դրամի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքներ: Պատրաստվել և մայրաքաղաքի տարբեր թաղամասերում տեղադրվել են թվով 130 նոր համրարավետ նստարաններ: Երևան-Ստեփանակերտ մայրուղու՝ քաղաքի մուտքի տարածքում կառուցվել է խորհրդանշական դեկորատիվ կոթող:

Չնայած իրականացված մեծածավալ աշխատանքներին, օրակարգում են մնում բազմաբնակարան շենքերի տանիքների վերակառուցման, ճակատային մասերի, բակերի հենապատերի և աստիճանների բարեկարգման հարցերը: Շարունակական լուծում է պահանջում մանկական նոր խաղահրապարակների շինարարությունը:

2017 թվականին, արձանագրված դրական դինամիկայի հետ մեկտեղ, մայրաքաղաքում գերակա է մնացել բնակարանային խնդիրը: Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել է քաղաքապետարանի՝ բնակարանային հարցերով հանձնաժողովի 7 նիստ: Հաշվառման ցուցակում ընդգրկվելու համար դիմում է ներկայացրել 20 քաղաքացի, որից 11-ը բավարարվել է, 9-ը՝ մերժվել: Ոչ բնակելի տարածքի հատկացման վերաբերյալ ընդունվել է 10, ուժը կորցրած ճանաչելու մասին՝ 7 որոշում: Համայնքի ավագանու համաձայնությամբ սեփականաշնորհվել է շուրջ 20 բնակարան, մասնավորեցվել՝ 2 օբյեկտ:

Իրավունքների պետական գրանցում ստանալու նպատակով հաշվետու ժամանակաշրջանում պատրաստվել և ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության Ստեփանակերտի բաժին է ներկայացվել ու պետական գրանցում ստացել պետական և համայնքային գույք հանդիսացող 76 միավոր: Միաժամանակ, օտարվել է նախկինում կառուցապատման իրավունքով տրամադրված անշարժ գույքի 3 միավոր: Հասցեների տրամադրման վերաբերյալ ընդունվել է թվով 262 որոշում: Իրականացվել են քաղաքի հասցեների ճշգրտման աշխատանքներ: Մասնավորապես ամբողջովին վերահասցեավորվել են Ակադեմիկոս Իոսիֆյան, Ալվարյան, Չարենցի, Թորգոմի, Տերյան, Թամանյան, Սարգիս Աբրահամյան, Վարդան Մեհրաբյան, Կարո Դանիելյան, Օրբելի եղբայրներ, Գեներալ Սարդարյան, Վ.Օվյան, Գեներալ Իվանյան, Հենրիխ Պողոսյան, Արսեն Ամիրյան, Գարեգին Նժդեհի փողոցները, նրբանցքներն ու փակուղիները: Համապատասխանաբար փակցվել են փողոցների և անշարժ գույքի նոր ցուցատախտակներ: Մայրաքաղաքի կենտրոնական փողոցների խաչմերուկներում տեղադրվել են փողոցների ուղեցույցներ:

2017թ. մասնակի բավարարվել են բնակչության պահանջները՝ տների տանիքների վերանորոգման վերաբերյալ: <<Բնակարանային շահագործման տնտեսություն>> ՓԲԸ կողմից ընթացիկ վերանորոգման են ենթարկվել բազմաբնակարան շենքերի թվով 523 բնակարանների և առանձնատների տանիքներ: Շուրջ 380զճ/մ ծավալով անձրևաջրահեռացման խողովակներն ու ջրհորդանները փոխարինվել են նորերով: 230 բազմաբնակարան շենքերում մաքրվել են ծխնելույզներն ու օդափոխիչ ուղիները: Շարունակական բնույթ են կրել բազմաբնակարան շենքերի մուտքերի հիմնանորոգման, ինչպես նաև նկուղների սանիտարական մաքրման աշխատանքները: Վերանորոգվել է թվով 13 խաղահրապարակ:

<<Ստեփանակերտի համայնքային ծառայություն>> ՓԲԸ-ն հաշվետու ժամանակաշրջանում զգալի աշխատանքներ է իրականացրել համայնքի կողմից մատուցվող կոմունալ ծառայությունների մասով՝ տեղեկատվության խմբագրման, հաշվառման բազայի վարման, համայնքում՝ հասցեավորման և հասցեների գրանցման գործառույթների կատարելագործման ուղղությամբ: 2017-ին նախատեսված 360.0-ի փոխարեն ջրամատակարարման-ջրահեռացման ծառայության գծով հավաքագրվել է շուրջ 410.0 մլն դրամ կամ կատարողականը կազմել է 114 %: Աղբահանման ծառայության մասով 138-ի դիմաց հաշվետու ժամանակաշրջանում հավաքագրվել է 136.0 մլն դրամ: Առաջադրանքը կատարվել է 98.1 %-ով: Բնակչության շահագործման ծառայության գծով նախատեսված 116-ի փոխարեն հավաքագրվել է շուրջ 111.0 մլն դրամ, ինչը կազմում է ծրագրվածի 95.1 %-ը:

Բնակչության արդյունավետ և անվտանգ սպասարկման խնդրում, անշուշտ, առանցքային նշանակություն ունեն բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգումն ու շահագործումը, ինչին առանձնահատուկ ուշադրություն է դարձվում: Բնակիչների անվտանգ շարժն ապահովելու նպատակով, 2017թ. Ազատամարտիկների փողոցի հ.15 շենքի հին, մաշված վերելակը փոխարինվել է նորով: Առաքելյան փողոցի հ.4ա շենքում ևս տեղադրվել է նոր վերելակ: Այդ գործընթացը շարունակական բնույթ կկրի և 2018-ին:

Հաշվետու ժամանակաշրջանում քաղաքապետարանը քաղաքաշինության նախարարության հետ համատեղ մշակել և հաջողությամբ իրականացրել է



<<Ձմեռ>> ծրագիրը: Մայրաքաղաքում ձմռան ամիսներին ակնկալվող դժվարությունները հաղթահարելու, արտակարգ իրավիճակների պայմաններում ձնամաքրման ու ձնահեռացման աշխատանքներն առավել արդյունավետ համակարգելու նպատակով ստեղծվել է հանձնաժողով, որում քաղաքապետարանի պատասխանատուներից բացի, ընդգրկվել են նաև շինարարական, կոմունալ ծառայությունների, կենսաապահովման ոլորտի կառույցների ղեկավարները: Առատ տեղումների հետևանքներն արագ վերացվել են, արտակարգ իրավիճակներում ձեռնարկվել են անհրաժեշտ բոլոր քայլերը՝ փոխհամաձայնեցված և արդյունավետ գործելու, քաղաքի փողոցներն ու մայրերը, հրապարակները, հասարակական վայրերը ձյան շերտերից ժամանակին ազատելու, տրանսպորտի անխափան երթևեկությունն ապահովելու համար:

Ծրագրի շրջանակներում <<Ջերմային տնտեսություն>> ՓԲ ընկերությունն ապահովել է իր կողմից սպասարկվող կաթսայատների անխափան աշխատանքը: Հիմնանորոգման են ենթարկվել մայրաքաղաքի դպրոցների, նախադպրոցական հիմնարկների, կաթսայատների ջերմուղիները, տեղադրվել են շրջանառու նոր պոմպեր: Առաջին անգամ փորձարկվել են ժամանակակից կաթսաների գազացրիչ նոր սարքեր: Նորոգվել և ընդլայնվել են Ս.Շահումյանի անվան ֆիզմաթ դպրոցի սնուցման ցանցն ու հ.8 ավագ դպրոցի ջերմուղին:

2017թ. ուշադրության կենտրոնում են գտնվել քաղաքի սանիտարական մաքրության և աղբահանման խնդիրները: Կենտրոնական աղբանոցում իրականացված արդյունավետ աշխատանքների շնորհիվ տարածքում իրավիճակը զգալիորեն բարելավվել է: Ստեփանակերտի վարչական տարածքից հավաքվել և աղբանոց է տեղափոխվել շուրջ 19 հազար տոննա կենցաղային և 250 տոննա շինարարական աղբ: Սանիտարական մաքրման է ենթարկվել աղբանոցի ողջ շրջապատը: Տարիների ընթացքում կուտակված աղբը խտացվել և վնասազերծվել է, ծածկվել հողի հաստ շերտով: Միաժամանակ շարունակվել են աշխատանքները կենտրոնական հին աղբանոցի սանիտարական <<մեկուսացման>> ուղղությամբ: Քաղաքի տարբեր թաղամասերում կառուցվել են 4 նոր և հիմնանորոգվել՝ թվով 18 աղբահարթակներ: Ձեռք են բերվել ու տեղադրվել 100 մեծ և 330 փոքր ծավալի մետաղյա աղբարկղներ: Բարեփոխումների համատեքստում, անշուշտ, դրական

միտում կարելի է համարել կենտրոնական աղբանոցի մշտական ջրագծի առկայությունը, աղբահավաք թվով 3 ավտոմեքենաների և ձնահավաք ժամանակակից տեխնիկայի ձեռքբերումը, ինչը նպաստում է աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

2017թ. <<Ջրմուղ կոյուղի>> ՓԲԸ գործունեությունը նպատակաուղղված է եղել Ստեփանակերտ քաղաքի բնակչության ջրամատակարարման և կոյուղու ցանցերի սպասարկման ծառայության որակի բարձրացմանը, ինչպես նաև գործող անձրևընդունիչների աշխատունակության ապահովմանը: Հատկանշական է, որ այսօր քաղաքի բնակչությունը գրեթե 100 %-ով ապահովված է շուրջօրյա ջրով: Ջրացանցի կառուցման աշխատանքներն ավարտվելու վրա են առաջին և երրորդ գոտիների՝ Աջափնյակ և Կրկժան թաղամասներում: Նոր ջրագծեր են անցկացվել քաղաքի Նոր Արեշ թաղամասում: Ջրառների, գոիչ կայանների, ջրատարների, արտեզյան հորերի և պոմպերի, ներքաղաքային ջրացանցի անխափան գործունեությունն ապահովելու և ջրարտադրության ինքնարժեքը նվազեցնելու նպատակով փորձ է արվում արդիականացնել համակարգը և առավել արդյունավետ օգտագործել առկա տեխնիկական հնարավորությունները:

Մայրաքաղաքում ջրամատակարարման շուրջօրյա ցանցից սնվում են ավելի քան 40 աղբյուր և ցայտաղբյուր: Մշտահոսներից շուրջ 20-ը բնական աղբյուրներ են համարվում: Տարվա բոլոր եղանակներին, այդ թվում՝ ձմռան և ամռան ամիսներին, ընկերությանը հաջողվել է ապահովել ջրի անխափան մատակարարումը բնակչությանը: Մեծածավալ աշխատանքներ են իրականացվել ջրատարների սառցակալումը բացառելու, շուրջօրյա ջրամատակարարման և կոյուղու ցանցերի վթարների վերացման ուղղությամբ՝ ինչպես ներքաղաքային ջրացանցում, այնպես էլ ներքաղաքային կոյուղու և բազմաբնակարան շենքերի կոյուղագծերի և ջրամատակարարման ներքին ցանցերում: Ջրի որակի ապահովման նպատակով լաբորատորիայի կողմից պարբերաբար իրականացվել են առողջարարական մի շարք միջոցառումներ: Ձնհալների և հորդառատ անձրևների հետևանքները վերացնելու, ջրի որակը՝ պահանջվող չափանիշներին համապատասխանելու և հնարավոր վարակիչ հիվանդություններից խուսափելու նպատակով, լրացուցիչ կազմակերպվել է ինչպես ՕԿՁ-ի, այնպես էլ՝ աղբյուրների ամենօրյա

ախտահանում և վարակազերծում: Տարվա ընթացքում, ըստ ժամանակացույցի, հ. 1 և հ.2 գտիչ կայանների ջրաքաշիչ գոտիներից նմուշահանվել և հետազոտվել է ջրի 67 նմուշ, վնասազերծվել են քաղաքը սնող բոլոր գետերի ակունքները:

Հաշվետու ժամանակաշրջանում ընկերության միջոցներով իրականացվել են շուրջ 65.0 մլն դրամի հիմնանորոգման և ընթացիկ նորոգման աշխատանքներ: Նոր ջրագծերի ավելացման հաշվին մայրաքաղաքում բնակիչ բաժանորդների թիվն աճել է 180-ով, իսկ իրավաբանական անձ համարվողներինը՝ 120-ով: <<Զրմուղ-կոյուղի>> ընկերությունը, նվիրատվության կարգով, ձեռք էրբերել <<Կամազ-245>> մակնիշի ավտոմեքենա, որը առավել արդյունավետ է դարձրել խորքային խցանումների վերացման աշխատանքները:

Չնայած տեխնիկական հնարավորությունների օգտագործմանը, այնուամենայնիվ, մի շարք թաղամասերում և փողոցներում պահանջվող չափանիշներին չի համապատասխանում անձրևահեռացման համակարգը, առանձին հատվածներում ընդհանրապես բացակայում են կոյուղագծերը, ինչը լրջորեն վտանգում է շրջակա տարածքների սանիտարական վիճակը: Օրախնդիր են մնում <<Վարարակն>> և <<Երեք ծորակ>> աղբյուրակապերում խմելու ջրի հիմնավարակազերծման և ջրագծերի հիմնանորոգման հարցերը: Ուսումնասիրություններից ակնհայտ է դարձել, որ հիշյալ աղբյուրակապերի ջրերը մակերևույթում հայտնվում են վարակված վիճակում, աղտոտումը տեղի է ունենում երկրի ընդերքում, ինչը գլխավորապես պայմանավորված է հարակից տարածքների սեփական տներում՝ ընդհանուր կոյուղագծի բացակայությամբ: Հարցը քննարկվել է քաղաքաշինության մասնագետների մասնակցությամբ և պատվիրվել համապատասխան նախագիծ: Շինարարական աշխատանքներն ավարտին կհասցվեն այս տարի:

2017 թվականն արդյունավետ է եղել <<Ակադեմիկոս Թախթաշյանի անվան բուսաբանական այգի>> ՓԲԸ համար: Քաղաքի տարբեր փողոցներում ու թաղամասերում իրականացվել են կանաչ գոտիների և տարածքների սանիտարական մաքրման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ կանաչ գոտիներն ընդլայնվել են ավելի քան 1000 քառ.մետրով: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ոռոգման ցանցերի ընդլայնման, նորերի

ստեղծման լայնածավալ աշխատանքներ, ինչը նպաստել է կանաչ տարածքների բարելավմանը: Ընդհանուր առմամբ, մայրաքաղաքում տնկվել է տարբեր տեսակի շուրջ 900 ծառ: Միզամարգերում կատարվել է ավելի քան 720 հազար ծաղկի սածիլների տունկ, որից 64 հազարը ներմուծվել է Երևանից: Միամսյակի շրջանակներում ծառատնկման ու սանիտարական մաքրման ուղղությամբ հատկապես լայնածավալ աշխատանքներ են կազմակերպվել <<Աջափնյակ>> և <<Արեշ>> թաղամասերում: Քաղաքապետի որոշմամբ ընկերության կողմից իրականացվել է 27 ծառահատում: Ձևավորվել է մոտ 450 և երիտասարդացվել՝ թվով 500 ծառ: Կատարված աշխատանքների հետ մեկտեղ, միևնույն ժամանակ, որոշ հարցեր տակավին մնում են չլուծված: Հատկապես ամռան շոգ եղանակներին սիզամարգերի և տնկիների արդյունավետ ոռոգման ժամանակ խիստ զգացվում է ջրցան նոր մեքենաների անհրաժեշտությունը:

2017թ. առաջնահերթությունների շարքում են գտնվել մայրաքաղաքի փողոցների, բակերի, խաղահրապարակների, զբոսայգիների արտաքին լուսավորման ցանցի շահագործման, պահպանման, վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքները: <<Արցախեներգո>> ՓԲԸ <<Կենտրոն>> մասնաձյուղի մասնագետների աջակցությամբ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող կապիտալ ներդրումների ծրագրի շրջանակներում, արդիականացվել են Մարշալ Բաղրամյան և Անդրանիկի փողոցների լուսավորության ցանցերը: Օդային մաշված գծերը, հին հենասյուներն ու լուսատուները փոխարինվել են նորերով: Էներգախնայող նոր լուսատուներ են տեղադրվել Ալեք Մանուկյան, Խարկուվյան, Բաղրամյան ու մի շարք այլ փողոցներում ստորգետնյա և օդային վթարված մալուխային գծերը փոխարինվել են ժամանակակից, մեկուսացված նոր գծերով: Միևնույն ժամանակ մայրաքաղաքի չլուսավորվող բակային հատվածներում իրականացվել են համապատասխան մոնտաժային աշխատանքներ, տեղադրվել են նոր լուսատուներ և հենասյուներ: Վերանորոգվել է շուրջ 1070 լուսատու, մի շարք ենթակայաններում տեղադրվել են էլեկտրական նոր սարքավորումներ: Հաշվի առնելով մայրաքաղաքի արտաքին լուսավորման աշխատանքների համակարգման ու էլեկտրաէներգիայի խնայողաբար օգտագործման անհրաժեշտությունը՝ փողոցներում հին լամպերը

շարունակվում են փոխարինվել նորերով, պարբերաբար վերահսկվում է լուսավորման համակարգի միացման-անջատման ռեժիմը:

### Հողօգտագործում

2017թ. հասարակական նշանակության, անհատական տների և արտադրական նշանակության օբյեկտների կառուցման համար ընդունվել է թվով 328 որոշում, պետական (համայնքային) սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման վերաբերյալ կնքվել՝ 114 պայմանագիր: Հողամասի վարձակալության համար կնքվել է 7, առուվաճառքի, նվիրատվության և անհատույց տրամադրման վերաբերյալ՝ թվով 185, իսկ անշարժ գույքի առուվաճառքի՝ 90 պայմանագիր: Անց է կացվել Ստեփանակերտ քաղաքի պետական սեփականություն հանդիսացող հողամասերի 2 բաց աճուրդ և 1 մրցույթ: Գյուղատնտեսության նախարարության հետ համաձայնեցվել է կազմված հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվետվությունը:

Շարունակվել է ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչության Ստեփանակերտի բաժնի հետ համատեղ աշխատանքը՝ պետական գրանցման ժամանակ առաջացած սահմանային անճշտությունների վերացման նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային խմբի կողմից տրվել է թվով 6 մասնագիտական եզրակացություն: Հողերի նպատակային նշանակության (կատեգորիայի) փոփոխման նպատակով իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ, հատկացված հողամասերի վերաբերյալ տեղեկատվական բազան համալրվել է նոր, հավաստի տվյալներով:

### Տրանսպորտ

Ստեփանակերտ քաղաքում ուղևորափոխադրումներն իրականացվում են թվով 5 ավտոբուսային՝ 36 միավոր, 3 միկրոավտոբուսային՝ 21 միավոր, մեկ հատուկ երթուղի ու շարժակազմերի միջոցով, որոնք պայմանագրային հիմունքներով սպասարկվում են «Ստեփանակերտ-սերվիս» ՓԲԸ և «Մհեր» ՍՊԸ-ի կողմից: Հաշվետու ժամանակաշրջանում մի շարք երթուղիներում

կազմակերպվել են շարժակազմերի համալրման աշխատանքներ: Ուսումնասիրվել և պարբերաբար ստուգվել է ընկերությունների կողմից ստանձնված պարտավորությունների կատարման ընթացքը, և տրվել են համապատասխան ցուցումներ՝ երթակարգավարական ծառայության բարելավման, շարժակազմերի արդյունավետ օգտագործման և ուղևորափոխադրման որակի բարելավման նպատակով: Սակայն աշխատանքների կազմակերպման ընթացքում ծագում են ոչ քիչ թվով խնդիրներ, որոնք խոչընդոտ են հանդիսանում բնակչության արդյունավետ սպասարկման համար: Դեռևս լիարժեք համալրված չէ մայրաքաղաքի ավտոբուսային (միկրոավտոբուսային) հավաքակազմը: Հատկապես շարունակում է ցածր մնալ հաշմանդամների տրանսպորտային սպասարկման մակարդակը:

Հաշվի առնելով վերջին տարիներին մայրաքաղաքում ավտոտրանսպորտային հոսքի միտումները և մի շարք երթուղիներում ուղևորահոսքի տատանումները՝ անհրաժեշտություն է ծագում քաղաքային երթուղային ցանցում ավելացնել ավտոբուսային երթուղիների քանակը՝ զուգահեռաբար նվազեցնելով միկրոավտոբուսների թիվը: Իրավիճակի շտկման և կարգավորման գործում ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության տրանսպորտային տեսչության կողմից ակնկալում ենք վերահսկողության ուժեղացում՝ ոլորտում օրենսդրական պահանջների կատարման, հաստատված չվացուցակների ապահովման, երթուղու ուղեգծի ինքնակամ շեղումների բացառման, ավտովարորդների կողմից՝ ուղևորների հանդեպ հարգալից վերաբերմունք դրսևորելու և անվտանգ սպասարկելու պայմանով:

Ելնելով ճանապարհային երթևեկության բարելավման և անվտանգության ապահովման պահանջներից, ինչպես նաև՝ համաձայն Ստեփանակերտ քաղաքի լուսացույցերի սպասարկման պայմանագրի, ԱՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության համապատասխան մասնագետների հետ վերահսկվել է քաղաքում գտնվող լուսացուցային օբյեկտների վերանորոգման և սպասարկման աշխատանքների գործընթացը: Էլեկտրաէներգիայի խնայման նպատակով, մի շարք փողոցներում լուսացուցային օբյեկտների կառավարման սարքերը փոխարինվել են

նորերով, կատարվել է մայրաքաղաքի ավտոճանապարհների հորիզոնական զծանշում, ճանապարհային հին նշանները փոխարինվել են նորերով: Հ.Թումանյան-Տիգրան Մեծի և Դավիթ Բեկի-Կամոյի փողոցների խաչմերուկներում տեղադրվել են լուսադիոդային նոր լուսացուցային օբյեկտներ: Գույքագրվել և կահավորվել են ներքաղաքային երթուղիների կանգառները, կառուցվել է 1 նոր ավտոտաղավար:

Ճանապարհային անվտանգ երթևեկության ապահովման կարևոր պայմաններից է հանդիսանում ավտոտրանսպորտային միջոցների տարեկան տեխզնումը: Ստեփանակերտ քաղաքում հաշվառված 11 հազար 197 փոխադրամիջոցներից, ըստ տեխնիկական զննության կայանի տվյալների, 2017թ. զննություն է անցել 7640 փոխադրամիջոց: Միևնույն ժամանակ, 3557 փոխադրամիջոց չի անցել տեխնիկական զննություն, ինչի արդյունքում փաստացի վտանգվել է նրանց երթևեկությունը և պետական ու համայնքային բյուջե չեն մուտքագրվել զգալի ֆինանսական միջոցներ:

#### Աշխատանք և սոցիալական ծառայություն

2017թ. նպաստ ստանալու նպատակով հաշվառման է վերցվել 1052 քաղաքացի: Պետական նպաստից օգտվում է 3230 նպաստառու, որոնց տարվա կտրվածքով վճարվել է 810 մլն 625 հազար դրամ: Խնայքանկում հաշիվ է բացվել բազմազավակ ընտանիքներում ծնված 3-րդ և հաջորդ՝ 242 երեխայի համար: Երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարման նպատակով հաշվառման է վերցվել 912 գործ (ֆինանսավորման գումարը կազմել է 229 մլն 300 հազար դրամ): Հաշվետու ժամանակաշրջանում ամուսնության միանվագ նպաստի համար վճարվել է ավելի քան 113.0 մլն դրամ: Հիշարժան օրերի կապակցությամբ բնակչության առանձին խմբերի վճարվել է շուրջ 87.0 մլն միանվագ գումար՝ 2151 ընտանիքի հաշվով: 39 նպաստառուների տրամադրվել են պրոթեզավորման պարագաներ, այդ թվում՝ թիկնասայլակ, լսողական սարք և այլն:

#### Առևտուր և ծառայություն

Հաշվետու ժամանակահատվածում, օրենքով սահմանված կարգով, համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի համար տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվել է 621, առևտրի և հանրային սննդի օբյեկտները ժամը 24,00-ից հետո աշխատացնելու համար՝ 10, բացօթյա առևտուր իրականացնելու համար՝ 290, շրջիկ առևտուր իրականացնելու համար՝ 332, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի համար՝ 14, տեխնիկական հեղուկների վաճառքի համար՝ 29, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի համար՝ 25 և մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու համար՝ շուրջ 100 թույլտվություն:

Պարբերաբար ուսումնասիրվել է տեղական տուրքերի գանձման ընթացքը, դիտարկվել տեղական տուրք վճարող սուբյեկտների գործունեությունը, կատարվել իրավիճակի վերլուծություն: Օրենսդրական պահանջներն ապահովելու, հետիոտնի և տրանսպորտի երթևեկին չխոչընդոտելու, քաղաքի գեղագիտական տեսքը պահպանելու, փողոցներում հակասանիտարական վիճակ չստեղծելու և բնակչության առողջությունը չվտանգելու նպատակով շարունակաբար վերահսկվել է բացօթյա ապօրինի առևտուրը և կանոնակարգվել օրենքով թույլատրվող ապրանքների վաճառքը: Համապատասխան ծառայությունների հետ համատեղ ստուգումներ են իրականացվել առևտրի և հանրային սննդի օբյեկտներում՝ պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի դեպքերը հայտնաբերելու, արգելելու և կանխարգելելու ուղղությամբ: Խախտումների վերաբերյալ կազմվել է 22 արձանագրություն:

Քաղաքապետարանին կից գործող վարչական հանձնաժողովի կողմից ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելու համար տուգանվել է 31, առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեություն իրականացնելու համար՝ 4, շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու համար՝ 4, ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման կանոնները խախտելու՝ 20 անձ, արգելված տեղերում անասուններ պահելու համար՝ 6, առանց թույլտվության



համայնքի տարածքում գովազդ տեղադրելու համար՝ 1 և համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու կանոնները խախտելու համար՝ 1 անձ:

2017թ. քաղաքի հասարակական նշանակության օբյեկտներում աշխատանքներ են տարվել գովազդային միջոցները գործող կանոնների պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Տուրքի մասով, գովազդի թույլտվության համար առաջադրանքը կատարվել է 117.4 %-ով կամ պլանավորված 14 մլն 520 հազար դրամի դիմաց հավաքագրվել է ավելի քան 17.0մլն դրամ: Համայնքի տարածքում գովազդի տեղադրման կարգին ու պայմանագրին ծանոթանալու և թույլտվություն ստանալու նպատակով, համայնքի շուրջ 150 գովազդատուների ուղարկվել են համապատասխան գրություններ: Արտաքին գովազդի օրինականացման հարցով դիմել և որոշում է ստացել թվով 102 գովազդատու, որից 48-ը՝ արտաքին գովազդ տեղադրելու համար: 25-ը՝ ուժը կորցրած է ճանաչվել: Քաղաքապետի որոշման համաձայն, մինչև մեկ ամիս ժամկետով թույլտվություն է ստացել 9 գովազդատու: Ստեփանակերտ քաղաքում գովազդի տեղադրման համար, ընդհանուր առմամբ, կայացվել է շուրջ 100 որոշում:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են համայնքի փողոցներում տեղադրված ոչ պիտանի գովազդների ապամոնտաժման աշխատանքներ: Հատուկ ուշադրություն է դարձվել տոն օրերին մայրաքաղաքի արտաքին ձևավորմանը: Տեսարժան վայրերում տեղադրված էկրանների միջոցով բնակչությանը հնարավորություն է ընձեռնվել ծանոթանալու քաղաքապետարանի կողմից պատրաստված տեսահոլովակներին և շնորհավորական ուղերձներին:

#### Հասարակական կարգի պահպանություն

2017թ. ԱՀ ոստիկանության քաղաքային վարչությունն ակտիվորեն համագործակցել է քաղաքապետարանի հետ: Համայնքում կատարված իրավախախտումների վերաբերյալ քաղաքապետին պարբերաբար տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն: Քաղաքապետարանի համապատասխան բաժինների և ստորաբաժանումների կողմից անհրաժեշտ քարոզչական աշխատանքներ են տարվել հասարակական կարգի պահպանմանը նպաստելու, մայրաքաղաքում կարգ ու կանոն ամրապնդելու ուղղությամբ:

## Պաշտպանություն

Առաջնորդվելով 2017թ. քաղաքապետության հիմնական միջոցառումների պլանով, ինչպես նաև ՔՊ պետի ու ղեկավար մարմինների որոշումներով և կարգադրություններով, համապատասխան գործունեություն է ծավալվել Ստեփանակերտի ՔՊ համակարգում՝ բնակչության և տարածքների պաշտպանության խնդիրների լուծման ուղղությամբ: Ճշգրտվել է Ստեփանակերտի ՔՊ պլանը և խաղաղ ժամանակի ՔՊ ուժերի և միջոցների, բնակչության պատասպարման հաշվարկը: Հաշվետու ժամանակաշրջանում, ընդհանուր առմամբ, քաղաքի տարածքում անցկացվել է շուրջ 30 ուսումնական գորավարժություն:

Արտակարգ իրավիճակներում բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով, նաև՝ ապրիլյան հայտնի իրադարձություններով պայմանավորված, արդյունավետ աշխատանքներ են իրականացվել բազմաբնակարան շենքերի նկուղների վերանորոգման ու մանրազերծման (ախտահանման) ուղղությամբ:

Քաղաքապետության կողմից բավարար աշխատանքներ են տարվել համայնքի տարածքում հակահրդեհային միջոցառումների ապահովման ուղղությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում Ստեփանակերտում գրանցվել է 235 հրդեհի դեպք կամ նախորդ տարվա համեմատ հիշյալ արտակարգ պատահարների թիվն աճել է 107-ով: Հիմնականում հրդեհների աճ է գրանցվել բուսածածկ տարածքներում, ինչին գլխավորապես նպաստել է տևական երաշտը: Մայրաքաղաքում հրդեհների հետևանքով հասցված վնասի ընդհանուր չափը կազմել է շուրջ 20.0 մլն դրամ:

## Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն

2017թ. ԼՂՀ դատարաններում ապահովվել է Ստեփանակերտի քաղաքային համայնքի լիազոր ներկայացուցչի մասնակցությունը դատական նիստերին: Ընդդեմ Ստեփանակերտի քաղաքապետարանի հարուցվել է 11 քաղաքացիական գործ, որոնց վերաբերյալ 2 հայցապահանջները բավարարվել են մասնակի, 3-ը մերժվել: Մինևույն ժամանակ ընդդեմ քաղաքապետարանի (հողհատկացման, բնակարանային հերթում հաշվառելու և սեփականաշնորհման վերաբերյալ) թվով 16 վարչական գործ է հարուցվել: 2 հայցապահանջներ մերժվել են, 1-ը՝

բավարարվել, մեկ գործով վարույթը կարճվել է՝ հայցվորների հայցից հրաժարվելու հիմքով: Շուրջ 40 քաղաքացիական գործերով ապահովվել է մասնակցությունը դատական նիստերին՝ որպես երրորդ անձի և 1 քրեական գործով օրինական ներկայացուցիչ: Խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում հրավիրվել է հանձնաժողովի 29 նիստ և կայացվել է 53 որոշում՝ անչափահասի գույքի օտարման, պատրոնաժ, խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու մասին: Երեխաների շահերին վերաբերող դատական գործերով տրվել է 40, երեխաների խնամքի և պաշտպանության, գիշերօթիկ հաստատությունում տեղավորելու մասին՝ 3, հաստատությունից դուրս գրելու մասին՝ 1 եզրակացություն: Երեխայի որդեգրման վերաբերյալ (որպես որդեգրել ցանկացող անձի), տրվել է 7 դրական եզրակացություն և, որպես որդեգրման ենթակա, հաշվառման է վերցվել 2 երեխա: Իրավախախտում կատարած 37 անչափահաս վերցվել է հաշվառման: Նույնքան երեխա հանվել է հաշվառումից: Աշխատանքներ են տարվել Ստեփանակերտի քաղաքային համայնքի կողմից ընդունվող որոշումներն ու կարգադրությունները Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Պարբերաբար կատարվել է քաղաքացիների ընդունելություն, տրվել են իրավաբանական անհրաժեշտ խորհրդատվություններ և պարզաբանումներ: Հարցերի լուծման նպատակով քաղաքացիները համապատասխան առաջարկություններով ուղղորդվել են լիազորված մարմիններ:

2017թ. ԱՀ Նախագահի և կառավարության աշխատակազմերից, Ազգային ժողովից և պետական այլ կառույցներից, ինչպես նաև քաղաքացիներից ստացվել են 2681 գրություններ և դիմում-բողոքներ: Նշված ժամանակահատվածում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ ընդունվել են քաղաքապետի 2610 որոշում և 282 կարգադրություն, համայնքի ավագանու 60 որոշում: Ամենատարբեր հարցերով քաղաքապետի մոտ ընդունելության է գրանցվել շուրջ 1300 քաղաքացի: Տարվա կտրվածքով մուտքագրվել է 93 օրենք, վարչապետի և կառավարության 87 որոշում, որոնք սահմանված կարգով ծանոթացման են ներկայացվել աշխատակազմի պատասխանատու

աշխատողներին, և իրականացման նպատակով տրվել են համապատասխան հանձնարարականներ: Սահմանված կարգով ժամանակին հաշվառվել են ելից գրությունները, կազմակերպվել՝ վերջիններիս առաքումը հասցեատերերին:

Օրենքի շրջանակներում համակարգվել են քաղծառայողների վերապատրաստման, ատեստավորման և մրցույթի կազմակերպման հետ կապված աշխատանքները: Անց է կացվել 1 մրցույթ, ատեստավորվել՝ 17 քաղծառայող: 19 քաղծառայողներ անցել են վերապատրաստման դասընթացներ:

#### Կրթություն, մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են տարվել սովորողների կրթության գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու, հիմնարկների նյութատեխնիկական բազան հարստացնելու, նոր տեխնոլոգիաների մուտքը համակարգ խթանելու, ուսումնական պարապմունքների, արտադասարանական-արտադպրոցական և սպորտային միջոցառումների նպատակային կազմակերպման ուղղությամբ:

Հանրակրթական առարկաների նկատմամբ հատուկ կարողություններ ունեցող և առանձնակի հետաքրքրություն ցուցաբերած սովորողների վերհանման, ինչպես նաև գիտության հիմունքների ուսումնասիրման նկատմամբ՝ աշակերտների շրջանում հետաքրքրությունը բարձրացնելու նպատակով, 15 ուսումնական առարկաներից կազմակերպվել են օլիմպիադաներ, որոնց արդյունքներով քաղաքային փուլում՝ 183 (նախորդ ուսումնական տարում՝ 157), հանրապետական փուլում՝ 72 (նախորդ ուսումնական տարում՝ 69), իսկ ՀՀ-ի եզրափակիչ փուլում՝ 46 (նախորդ ուսումնական տարում՝ 31) մասնակիցներ գրավել են մրցանակային տեղեր, խրախուսվել գովասանագրերով, պատվոգրերով և դիպլոմներով:

2017թ. մայրաքաղաքի կրթական հաստատությունները հիմնականում ապահովվել են բարձրագույն մանկավարժական և համապատասխան մասնագիտական կրթություն ունեցող կադրերով: Ուսուցիչների մասնագիտական, մեթոդական ու մանկավարժական վարպետության բարձրացման նպատակով,

հաշվետու ժամանակահատվածում 232 ուսուցիչ-մասնագետների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ:

Հաշվետու ժամանակահատվածում ուշադրության կենտրոնում են գտնվել սովորողների հայեցի դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքները: Կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ, ինչպես սովորողների կրթական մակարդակի բարձրացման, նրանց գիտակցական կարգապահության, հայրենասիրական ու գեղագիտական դաստիարակության ապահովման, այնպես էլ՝ հասարակության մեջ մանկավարժների դերը բարձրացնելու նպատակով անց են կացվել ավանդական դարձած «Վերջին զանգ», «Առաջին զանգ», «Ոսկե աշուն», «Մայրենիի օր», «Այբուբենի տոն», «Անկախության օր», «Ստեփանակերտի օր», «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն զինղեկ», «Տարվա լավագույն դաստիարակ», «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթները: Կազմակերպվել են ինտելեկտուալ խաղեր, ասմունքի և ստեղծագործական շարադրությունների մրցույթներ, տարաբնույթ այլ միջոցառումներ, որոնց արդյունքներով հաղթող ճանաչվածները խրախուսվել են:

Կազմակերպված է անցել դպրոցականների ամառային հանգիստը: Ընդհանուր հաշվով, Արցախի և Հայաստանի ճամբարներում հանգստացել է 655 երեխա: Հայկական երկու հանրապետությունների մայրաքաղաքների քաղաքապետարանների միջև կնքված համագործակցության ծրագրի շրջանակներում 2017թ. գարնանը Երևանի Նորք-Մարաշ և Էրեբունի վարչական շրջանների հրավերով՝ Ստեփանակերտի նախադպրոցական հիմնարկների մի խումբ ուսուցիչներ մեկնել են Երևան և ակտիվ շփումներ ունեցել հանրակրթական դպրոցների և նախադպրոցական հիմնարկների աշխատողների հետ, ծանոթացել նրանց առաջավոր փորձին: Ուշադրության կենտրոնում են գտնվել սովորողների ֆիզիկական դաստիարակության, սպորտի և ռազմամարզական խաղերի հետագա մասսայականացման հարցերը: Այդ նպատակով կազմակերպվել ու անց են կացվել տարաբնույթ քաղաքային առաջնություններ և մրցույթներ:

Հաշվետու տարում շարունակվել են հ. 9 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքները: Հրատապ են մնում հ.12 հիմնական դպրոցի հիմնարար

վերանորոգման, հ. 4 և հ. 6 մանկապարտեզների համար երաժշտական դահլիճների, նախադպրոցական ցանցի ընդլայնման նպատակով տարբեր թաղամասերում նոր մանկապարտեզների կառուցման խնդիրները: 2018թ. առաջնահերթ կմնան հ.10 հիմնական դպրոցի հիմնարար վերանորոգման և կահավորման հարցերը:

2017թ. հազեցած է եղել նաև մայրաքաղաքի մշակութային կյանքը: ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության աջակցությամբ քայլեր են ձեռնարկվել մշակութային միջոցառումների որակի բարելավման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ, իրականացվել են մի շարք նոր ծրագրեր: Պատշաճ մակարդակով են անցել Ամանորին, Սուրբ Մարգիս գորավարի տոնին, Հայրենյաց պաշտպանի և Արցախի վերածննդի օրվան, Մայիսյան եռատոնին, ԱՀ անկախության հռչակման տարեդարձին, Ստեփանակերտի օրվան ու Երիտասարդների միջազգային օրվան նվիրված միջոցառումները: Մշակույթի քաղաքային տան և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ նշվել են «Տրնդեզն» ու «Սուրբ Զատիկը»: Կազմակերպվել են երգի և ասմունքի փառատոներ, տոնական համերգներ ու մի շարք ցուցահանդեսներ: Ավանդույթ է դարձել երիտասարդական արշավների կազմակերպումը՝ Արցախի պատմամշակութային հուշարձաններ ու վանքեր, որոնք վերածվում են յուրահատուկ ուխտագնացության: Շարունակվել է ակտիվ համագործակցությունը երիտասարդական, ստեղծագործական և հասարակական կազմակերպությունների հետ:

#### Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

2017թ. մարզական միջոցառումներն իրականացվել են նախապես հաստատված աշխատանքային օրացուցային պլանով: Տարբեր մարզաձևերից քաղաքային առաջնություններում առաջնակարգ տեղեր գրաված թիմերը մասնակցել են հանրապետական մրցումներին: Ավանդական են դարձել հիշարժան օրերին նվիրված տոնական մարզական միջոցառումները, որոնք, մասնավորապես, անց են կացվում Հայրենիքի պաշտպանի օրվա, Մայիսյան եռատոնի, Անկախության օրվա, Քաղաքի և Ֆիզկուլտուրնիկի օրվա կապակցությամբ:

Ստեփանակերտ քաղաքում թիմերի միջև կազմակերպվել են «<Լավագույն մարզական ընտանիք>> մրցումներ, անցկացվել մարզական փառատոներ: Մայրաքաղաքի կոլեկտիվների միջև կազմակերպված բասկետբոլի, վոլեյբոլի, ֆուտբոլի, հանդբոլի թիմային մրցումների ժամանակ ի հայտ են բերվել Ստեփանակերտի լավագույն թիմերը, որոնք մասնակցել են հանրապետական առաջնություններին: Ստուգատես-մրցույթում 1-ին պատվավոր տեղը զբաղեցրել են թիմերը քաղաքապետարանի կողմից արժանացել են նվերների և պատվոգրերի:

### Արտաքին կապեր

Տարեցտարի ընդլայնվում է մայրաքաղաքներ Երևանի և Ստեփանակերտի համագործակցությունը: 2012թ. սեպտեմբերի 28-ին երկու մայրաքաղաքների քաղաքապետների կողմից ստորագրված համաձայնագրի շրջանակում բոլոր ուղղություններով ավելի են սերտանում կապերը: Երևանի քաղաքապետարանն ակտիվ աջակցություն է ցուցաբերում քաղաքային տնտեսությանը՝ կառավարման ոլորտում: Այն իր փորձն է հաղորդում քաղաքապետարանի բաժիններին՝ գործառույթների կատարելագործման, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, եկամուտների հաշվառման և հավաքագրման, հարկային դաշտի ուսումնասիրման և այլ բնագավառում:

Հատկանշական է, որ փոխգործակցությունը չի սահմանափակվում երկու քաղաքապետարանների պատասխանատուների փոխայցելություններով, և Ստեփանակերտի հետ ամուր կապեր են հաստատել նաև Երևանի վարչական բոլոր 12 շրջանները: 2017թ. համագործակցության շրջանակներում պատվիրակությունների կողմից շուրջ չորս տասնյակ փոխայցելություններ են կատարվել և հստակեցվել անելիքները, նախանշվել առաջնահերթությունները: Քայլեր են ձեռնարկվում գործընկերային հարաբերություններն առավել սերտացնելու և կայուն հիմքերի վրա դնելու համար:

Երկու քաղաքապետարանների համագործակցության արդյունքում է ծնվել Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ Ստեփանակերտում «<Ազատամարտիկների այգու>> հիմնադրման և Աստվածամոր Սուրբ Հովանի մայր տաճարի հարակից տարածքների բարեկարգման և կանաչապատման

աշխատանքներ իրականացնելու մտահղացումը: Անցյալ տարի լայն թափ են ստացել Ազատամարտիկների այգու կառուցապատման աշխատանքները:

Որպես երկու մայրաքաղաքների միջև կապերի սերտացման և ժողովուրդների անկաշկանդ հաղորդակցման ու բարեկամության ամրապնդման միջոց կարելի է համարել ավանդական դարձած մշակութային և մարզական միջոցառումների համատեղումն ու արշավների կազմակերպումը, որոնք թույլ են տալիս ավելի հաճախակի դարձնել շփումներն ու լավ ճանաչել միմյանց, ամառային հանգիստն անցկացնել Արցախի գեղատեսիլ բնության գրկում, հաղորդակցվել պատմա-մշակութային հուշարձաններին և նպաստել զբոսաշրջության զարգացմանը:

Երևանի ու Ստեփանակերտի միջև բարեկամության և կապերի ամրապնդմանը նոր լիցք կհաղորդի երկու քաղաքապետների կողմից ստորագրված 2015-2020թթ. համագործակցության ծրագիրը, ինչը լայն հեռանկարներ է խոստանում: Այդ համատեքստում կարելի է դիտարկել, մասնավորապես, Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Ստեփանակերտի վերանվանման 95-ամյակի կապակցությամբ նախանշված միջոցառումների ծրագրերը, որոնք կիրականացվեն երկու քաղաքապետարանների համատեղ ջանքերով: